Վահան Թոթովենց

Ինչպես ծովում խեղդեցի մի մարդու

Նա ինձ հանդիպեց Ատլանտյան ջրերում, «Օլիմպիկ» նավի վրա: Գնում էր Ամերիկա: Մեր հանդիպումը պատահական չէր, այնպես չէր, ինչպես առհասարակ ճամփորդները պատահում են իրար ճաշի սեղանի շուրջը, մի նոր տեսարան դիտելիս, կամ միևնույն լեզվով խոսելու առիթով մենք իրար մոտեցանք օրգանապես: Հենց որ նավի տախտակամածի վրա դրի ոտներս՝ հարյուրավորների մեջ աչքիս ընկավ մի թուխ մարդ, մազոտ երեսով, այնպես, ինչպես մի անմշակ, բախտին թողնված փոքրիկ պուրակ, ցնցոտիներով և խորը թախծոտ:

Կամ հայ է, կամ սիրիացի, մտածեցի, առնվազն մի խեղճ փոքրասիացի:

Մոտեցա և անմիջապես հարց տվի.

Հա՞՛յ ես:

Հա ՛յ եմ, յա՛, պատասխանեց՝ թախիծը փոխելով ուրախության:

Հինգ րոպեում մենք բարեկամներ էինք: Բարձրացանք նավի կաֆեն, խմեցինք ու սկսեցինք խոսել:

Ես նրան պարոն Խաչեր էի ասում, բայց երբ կամաց-կամաց ծանոթացա իր անձնավորության, իր առօրյա փիլիսոփայության, աշխարհի իրականության հանդեպ իր ունեցած տեսակետներին՝ մտածեցի, որ նա կյանքում անպայման Խաչեր աղա է: Դեռևս հաստատ եզրակացության չէի հասել՝ երբ նա իր

պատմության ընթացքում ասաց. Մեսրոպը շատ տսաց. «Խեաչեր աղա, գնա՛, այստեղ մի կենա, ապագաղ աղեկ է»:

Իմ բարեկամս աղա էր: Բաժակն էլի լցրեցի գարեջրով և՝

Խաչեր աղա, ո՞վ էր երազում, որ այս ծովի վրա մենք իրար պիտի պատահենք:

Կո՛ւռռթ… հա՛, աշխարհում մարդ իմանա առաջուց թե ի՛նչ պիտի պատահի:

Ճաշի զանգը տվեց և մենք բաժանվեցինք:

Պարո՛ն,– ձայն տվեց Խաչեր աղան ճաշասեղան մտնելուց առաջ, ուզում եմ քեզ տեսնել այս գիշեր մոտավորապես ժամը 2-ին, երբ տախտակամածի վրա ոչ ոք չի մնա,քեզ բան եմ ասելու:

Շատ լավ, շատ լավ, պատասխանեցի և մտա ճաշելու:

⁂

Կես գիշեր: Օվկիանոսը խաղաղ է ու մոգ-կապույտ: Հեռվից մի Նավ է նշմարվում: «Օլիմպիկը» և նա խոսում են իրար հետ լուսախոսով: Նստած եմ կամրջակի նստարանի վրա, նայում եմ քնած ջրերին, լսում եմ նավի վիթխարի հևոցը և մտածում եմ ծուլության ստեղծագործ ուժի մասին: Հանկարծ տեսնում եմ՝ Խաչեր աղան մոտենում է ինձ խորհրդավոր վհուկի նման:

- Նստի՛ր, Խաչեր աղա, ասում եմ, նստի՛ր և ապրի՛ր ծովը:

- Է՛հ, ծովուն ժամանա՞կն է:

Աշխատում եմ շարունակել իմ անդորրը, բայց Խաչեր աղան մեկ-մեկ ախ ու վախ է անում և բովանդակ մթնոլորտը դարձնում է սովորական և շուկայիկ: Աղայության այդքան տափակ լինելը ես այդ օրն զգացի:

Ի՞նչ պիտի ասեիր, Խաչեր աղա, պատմիր տեսնենք, ասում եմ:

Հա՛, շատ բան պիտի ասեմ, պատասխանում է մեր աղան,ախ է անում, վախ Է անում, գնանք լույսի տակ,այնտեղ նստենք:

Գնում ենք: ՝ Ապրում էի քաղաքում,- վերջապե՛ս սկսում է Խաչեր աղան, ունեի կին և մի հատ էլ ծեր մայր, տուն-տեղ ծախեցի և ճանապարհ ընկա դեպի Ամերիկա: Հասա մինչև Պոլիս մայրս վախճանվեց, նրա հիվանդության պատճառով Պոլսում բավական մնացի և, բնական է, ճանապարհի դրամագլխից ծախսեցի, հետո նորից ճամփա ընկա: Հասանք Իզմիր. կինս հիվանդացավ, ստիպված նավից դուրս եկանք: Իզմիրում էլ կինս մեռավ, երեխաներս մնացին որբ, բոլորովին անօգնական: Որոշեցի որբանոց տանել, բայց ոչ մի որբանոց երեքը միասին չվերցրեց. երեք որբերս էլ մի-մի որբանոց տեղավորեցի և նորից ճամփա ընկա դեպի Ամերիկա:

Ես ընդհատեցի Խաչեր աղային,

- Ի՞նչ ցավ ունեիր, որ տուն-տեղ քանդեցիր և Ամերիկա ես գնում, հարց տվի, աղքա՞տ էիր, քաղաքակա՞ն պատ¬ ճառներ կային, թե՞ քաղաքակրթական պատճառներ:

Չէ՛, լավ էի ապրում, կնոջս հագվեցնում էի ինչպես փչենք ջորին, քաղաքական ոչ մի պատճառ չունեի, մենք գերդաստանով հեղափոխության չենք հավատում:

Խաչեր աղան քաղաքակրթության խոսքը չարավ: Նա չհասկացավ իմ միտքը:

Ապա՞:

- Հարստանալու եմ գնում, միանգամից հարստանալու:

Ստույգ բան էր, որ Խաչեր աղան զառանցում էր: Երևի նա լսել էր, որ Ամերիկայում ոսկին թափած է փողոցներում:

- Ամերիկայում բոլոր փողոցները սալահատակված են և օրական երկու անգամ մեքենա-ավելով ավլում են, փողոցներում ոսկի չի մնամ, իզո՛ւր ես կարծում, որ փողոցներում ոսկի կա:

-Ես երբեք չեմ կարծում, որ փողոցներում ոսկի կա:Ես ոսկին մե՛ր քաղաքում եմ գտել:

Շփոթվում եմ: Եթե ծովն ալեկոծ լիներ՝ պիտի վստահեի իմ անհասկացողության, բայց ծովը խաղաղ է, հունիսի սկզբների հով գիշեր, ուղեղային խանգարման ոչ մի պատճառ չունեմ :

- Եթե ոսկին ձեր քաղաքում ես գտել, ինչո՞ւ Ամերիկա ես գնում: Ա՛յ, այստեղ է գաղտնիքը:

Բացատրիր, Խաչեր աղա, հիմա (խելքս) կթոցնեմ:

Խաչեր աղան, առանց պատասխանի, կամաց դուրս է բերում իր ծոցի գրպանից շորերի մեջ փաթաթված մի թղթի կտոր և ապա ստորին գրպանից մի ատրճանակ, թուղթը երկարում է ինձ, իսկ ատրճանակը պահում է իր ձեռքում՝ մատը բլթակի վրա:

Կարդա՛, ասում է:

Կկարդամ, բայց ի՞նչ բանի համար է ալդ վայրագ գործիքը:

Ես քեզ լավ չեմ ճանաչում, դրա համար է ատրճանակը, բայց եթե դու այդ թուղթն ապահով վերադարձնես ինձ՝ ոչինչ չեմ անի քեզ, ասում է Խաչեր աղան:

Երկուսս էլ իրար չենք ճանաչում, բայց ատրճանակը քո ձեռքն է, ասում եմ համոզիչ տոնով և երկարում եմ թուղթն ապահով վերադարձրած լինելու համար, առանց կարդալու:

Չէ՛լ, չէ՛, կարդա, երեխաներիս վրա երդվում եմ, ոչինչ չեմ անի, միայն կարդա և ինձ տուր:

Կարդում եմ: Թուղթը գրված է անգլերեն.

ՍՄԻԹ նպարեղեն ընկերություն.

Վճարեցեք ներկայացնողին 5 000 000 դոլար

Ս. Ն. Ը, գանձապահ՝

(ստորագրությունն անընթեռնելի)

Ընթերցումից հետո նայում եմ Խաչեր աղային, ատրճանակը բռնել է ճակատիս, և աչքերը փայլում են նավի լուսարձակի նման: Այլևս ատրճանակից չեմ վախենում, որովհետև ապահովաբար պիտի վերադարձնեմ այդ «գանձը» իրեն, միայն դարձնում եմ թուղթը՝ կարդալու ետևը գրված ռեկլամը, բայց մաշվելու վտանգից զերծ պահելու համար մի քանի շերտ թուղթ է փակցրել: Վերադարձնում եմ թուղթը: Խաչեր աղան անմիջապես ճանկում է, ատրճանակը նետում է գրպանը և թուղթը ծրարում շորերի մեջ և դնում տեղը:

Լուռ եմ: Խաշեր աղան սպասում էլ:

Կարդացի՞ր: Այս է «միանգամիցը»:

Ճիշտ է, ասում եմ, ամեն ինչ կորցրած մարդու վտանգավոր մոտիկությունից վախեցած: Ամերիկայի փողոցներում ես իմանում եմ, որ ոսկի չկա, պարո՛ն, ոսկին սա է, և ձեռքը նետեց կրծքին:

Քեզ ո՞վ թարգմանեց այդ թուղթը, հարց տվի:

- Մի վարժապետ: 50 ոսկի վճարեցի թարգմանության համար:

Բարի գիշեր, Խաչեր աղա, ասացի, վաղը կտեսնվենք:

Խաչեր աղան չպատասխանեց: Գնաց նավի աջակողմը և աչքերը հառեց Ամերիկային: Ես գնացի իմ խցիկս և մտածեցի այն տգետ ու լիրբ վարժապետի մասին, որ այդ խեղճ ու կրակ աղային հավատացրել էր, որ Ամերիկա գնալով կարող էր գանձել մի հասարակ ռեկլամի թուղթ:

⁂

Առավոտ էլի նավի կամրջակի վրա նստել էինք ես և Խաչեր աղան:

Ատրճանակդ ո՞ւր է, հարցրի ցած ձայնով:

Բարձիս տակ է, պատասխանեց, իրիկունը հետս առի, որ եթե թուղթն ինձ չվերադարձնես՝ խփեմ քեզ:

Լսի՛ր, Խաչեր աղա, այդ թուղթը մի հասարակ հայտարարություն է, վարժապետը քեզ խաբել է, ոչ մի արժեք չունի: Ամերիկայի փողոցներում ոսկի չկա, բայց այդ աչք ծակող 5 000 000 դոլարներից շատ կա: Դու իզուր ես ճանապարհ ընկել՝ կորցնելով քո մորդ, կնոջդ և երեխաներիդ, ասացի հանգիստ և անշահախնդիր տոնով:

Դժբախտաբար Խաչեր աղան ինձ հավատաց, որովհետև աչքերն սկսեցին ինձ հառել մեռնող կովի աչքերի նման, ապա երերվեց և թուլացավ:

Ապա կի՞նս, երեխանե՞րս, կմկմաց և սկսեց հիմարի նման լաց լինել առանց մի կաթիլ արցունքի:

Խաչեր աղա, արի գնանք խցիկդ, քնի՛ր, կմոռանաս:

Մոռանա՞մ: Լա՛վ կմոռանամ, յա՛:

Տարի նրան իր խցիկը, պառկեցրի: Հեկեկում էր:

Ամեն ինչ կորցնելուց հետո՝ աղայությունս էլ կորցրի:

Աղայությունդ ոչինչ, լավ որ կորցրիր, հիմա իմաստուն կդառնաս, ասի և դուրս եկա: Իրիկունը, ուշ ժամանա, գնացի Խաչեր աղայի խցիկը՝ տեսնելու համար, թե ինչպե՞ս է զգում: Խցիկում չէր: Դուրս եկա և սկսեցի ման գալ նավի տախտակամածի վրա՝ գտնելու: Վերջապես գտա նրան նավի առաջամասում: Երբ ինձ տեսավ՝

Դու ուզում ես ինձ փրկեր: Չե՞մ թողնի, պոռաց և նետվեց ծովը:

Անմիջապես նավապետը հրամայեց կանգնեցնել նավը,նավաստիները թոկերով նետվեցին ծովը և դարձյալ նավ բերին Խաչեր աղային: Մեռածի շորերն անմիջապես քննության ենթարկեցին և ոչինչ չգտան, ես էլ ոչինչ չպատմեցի միգուցե հանցանք լիներ իմ իմաստությունը:

Բոլորն էլ եզրակացրին, թե խեղճ մարդը սիրո զոհ է:

1924 թ.